

Մ Ա Ս Ի Ս

ՇՍԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35րդ ՏԱՐԻ

1886 ՅՈՒԼԻՍ 5

ԹԻԻ 3829

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ, ՇՅԲԱԹ 5 ՅՈՒԼԻՍ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԳՈՐԾԱԽՈՐԱՅ ՎԱՏԹԱՐԱԳՈՅ ԹՇՆԱՍԻՆ

ՊՈՍԳՈՆ, Յուլիս 14

Տոգ . Դաւլէճ , որ հինգ կիրակի շարունակ գործնական քարոզներ կուտար Աշխատութեան եւ Գրամագլխոյ կարեւոր խնդրոյն վրայ , երէկ Պրուքլինի մէջ խօսեցաւ իւր ժողովրդեան գործաւորաց վատթարագոյն թշնամոյն , ոգելից ըմպելեաց վրայ , քարոզ մը զոր Պոսգոնի թերթերն այսօր ամբողջապէս հրատարակած են : Խորհելով թէ այս քարոզին ընթերցումը օգտակար պիտի ըլլայ Մասիի ընթերցողաց եւս՝ արժան կը համարիմ անոր թարգմանութիւնը զրկել ի հրատարակութիւն :

Տոգ . Դաւլէճ քարոզին բնաբան առած էր Անդեայ մարգարէութեան Ա . գլխոյ Յ համարը . « Եւ վարձով բանողը ծակ քսակի համար կը վաստկի իւր վարձքը : »

Դարեհի Աշտասոյեայ թագաւորութեան ատեն Պարսկաստանի մէջ ժողովուրդը չէր հարստանար , չէր բարգաւաճեր : Մարդիկ դրամ կը չահէին , բայց չահուած դրամը չէին պահեր : Կը նմանէին այնպիսի անձանց որ կը դնեն իրենց դրամը սարկի կամ քսակի մը մէջ առանց գիտնալու թէ պարկը ծակուած կամ ցեցերէ կերուած է , եւ կամ կերպով մը եղած է անյարմար իւր մէջ պահելու սպառնական իրեր : Տարբե-

րութիւն չէր ըներ այն մարդոց թէ որչափ շատ վարձ կ'ընդունէին , վասն զի բոլորը կը կորուսանէին : « Վարձով բանողը ծակ քսակի համար կը վաստկի իւր վարձքը : » Ի՞նչ եղած են երկիրիտնաւոր թաղերներն որ այս երկրին մէջ իբրեւ աշխատութեան վարձ տրուած են գործաւորաց : Այս թաղերներուն մէջ մասը տրուած է բնակութեան վարձ , զնելու տուն տեղ կամ զգեստ , կամ հոգալու ընտանեկան ծախքեր եւ կամ կենաց հարկաւոր սէտքեր , կամ ծերութեան հասակի մէջ խաղաղ եւ անդորր կենաց միջոց պատրաստելու : Ի՞նչ եղած են մնացեալ երկիրիտնները : Վատնուած են յիմարական ծախուց , վատնուած են խաղի սեղաններու վրայ , վատնուած են արեցուցիչ ըմպելեաց : Այս՝ մնացեալ երկիրիտնները գրուած են սարկի մը մէջ որ հարկւր ծակ ունէր : Հաւաքեցէք ի մի վայր դրամն զոր անցեալ երեսուն ամաց մէջ գործաւորք վատնեցին ոգելից ըմպելեաց , այն դրամով կրնամ շինել ամէն գործաւորի համար տուն մը պարտիզով հանդերձ , եւ կրնամ հոգցունել ամէն գործաւորի որդիները պատուական շախաչով եւ ազջիկները մետաքսեայ շրջագգեստով , եւ անոր դրան առջեւ կրնամ կեցունել գեղեցիկ ձի մը , եւ իւրաքանչիւր գործաւորի կրնամ տալ ապահովաւ գրութեան թուղթ այնպէս որ անոր մահուանէն ետքն ալ անոր տունը մնայ շէն եւ պայծառ :

Գործաւորաց ամենէն ոխերիմ եւ ամենէն ահաւոր թշնամին է ոգելից ըմպելիք : Այս թշնամին է գարուց անխլխանականը (անարբիտը) , որ պոչոպոչ է , եւ այժմ կը պոչոպոչէ Ամերիկեան Աշխատութեան (գործաւորաց դասուն) միտքն եւ հոգին : Գոր-

ծաւորաց համար ոգելից ըմպելիք են վատ թարազոյն թշնամի քան զվենաժամառու- թիւն , թշնամի ահեղագոյն քան զմիացեալ գրամագլուխ : Այս թշնամին ամէն տարի կը կապտէ կը կողոպտէ գործաւորներն ի- րենց շահուն մէկ մեծ մասէն : Այս թշնա- մին իւր խմորող առջորդ շնչով կը զարնէ արուեստաւորը կամ գործաւորն առաւօ- տուն երբ նա գործի կ'երթայ , միջօրէին երբ նա գործէ քիչ մը դադար կ'առնու , երեկոյին երբ նա գործի տեղէն կ'երնէ տուն դառնալու , կամ շաբաթ օրերն երբ աշխա- տութեան վարձ կը տրուի գործաւորին , այս թշնամին կը յափշտակէ մեծ մաս մը գրամին որ կրնար գործածուիլ ի պէտս ըն- տանեաց , բայց կուտայ զհեւ զայն գինե- պաններու : Ի Պրուքլին 800 եարտա միջոցի մէջ կան 54 խանութներ՝ յորս ոգելից ըմ- պելիք կը վաճառուին , եւ տակաւին ջանք կ'ըլլայ ոգելից ըմպելեաց նոր խանութներ բանալ այս շրջափայրին մէջ : Այս երկրին մէջ գտնուած ոգելից ըմպելեաց խանութ- ներն եթէ քովէ քով դրուին , խնամով հա- չիւ եղած է , որ անոնց մէկ ծայրը Նիւ- Եորք եւ միւս ծայրը մինչեւ Շիգակո կը հասնի : Օն յառաջ , կը դռչէ ոգելից ըմպել- եաց դեւն իւր բանակին , եւ գրաւէ զԱ- մերիկեան ազգն : Ոգելից ըմպելեաց դեւն իւր թունաւոր եւ դատապարտելի հեղուկ- ները կը լեցունէ հարիւր հազարաւոր գոր- ծաւորաց կոկորդներէն վար . եւ մինչ սո- վորական գործադուլերն են մնաստկար եւ աղետաբեր թէ՛ գործատեարց եւ թէ՛ գոր- ծաւորաց . ես կը հրատարակեմ եւ կը քա- րոզեմ ամեղքեական գործադուլ ընդդէմ ո- գելից ըմպելեաց , եւ եթէ այս գործադուլը շարունակուի , պիտի ըլլայ դարման գոր- ծաւորաց ցաւոց եւ փրկութիւն ազգին : Կը համարձակիմ ըսել թէ Միացեալ Նահանգաց մէջ չը կայ առողջ եւ կորովի գործաւոր մը , որ յառաջիկայ աստը տարիներու մէջ , եթէ բոլորովին հրաժարի արբեցութենէ եւ խը- նայողութեամբ ասորի , կարող չ'ըլլայ փոքր ի շատէ գրամագլխոյ տէր ըլլալ : Մեր եր- կիրն ամէն տարի կուտայ ոգելից ըմպելեաց 1,500,050,000 թալէր : Աիք տարակոյս թէ այս գումարին մէկ մեծ մասը կուտան գոր- ծաւորը : Խնամով պատրաստուած վիճակա- գրութիւնք կը ցուցունեն թէ Մեծին Բրի-

տանիոյ մէջ օրական կամ շաբաթական վար- ճով աշխատող մարդիկ տարին 100,000,000 լիրա կը վատնեն ոգելից ըմպելեաց : Ո՛վ գործաւոր , նստէ վար , եւ հաշիւ քէ թէ դու ո՛րչափ գրամ կուտաս ամէն տարի ո- գելից ըմպելեաց : Գումարէ ինչ որ շաբթէ շաբաթ , ամսէ ամիս տուած ես եւ կուտաս ոգելից ըմպելեաց , գումարին վրայ աւել- ցուր ինչ որ քու ընկեր գործաւորներդ տը- ուած են եւ կուտան , եւ պիտի տեսնես որ , եթէ այդ գրամները սահուէին , դուք ամէնքդ կ'ըլլայիք ձեր տէրերը , եւ մեծ կախում չ'էիք ունենար ուրիշներէ : Հայրս անգամ ո՛ր ըսաւ ինձ . « Կանուխէն միտքս դրի ոգելից ըմպելիք չը գործածել , վասն զի հունձքի ատեն , երբ ազարակը կ'աշխա- տէինք , տեսայ որ , թէեւ ես Ֆիզիքսպէս տկար էի , բայց կրնայի աւելի երկար առեն դիմանալ գործի քան զանոնք որ ոգելից ըմ- պելի կը գործածէին որպէս թէ ոյժ եւ զօ- րութիւն ստանալու համար : » Անգլիոյ մէջ աղիւսագործ մը յետ խնամով քննելոյ իւր գործաւորաց կատարած գործը կ'ըսէ . « Այն որ գործը կը խմէր՝ շինեց 659,000 ա- դիւս , իսկ այն որ ոգելից ըմպելիք բնաւ չէր գործածեր՝ շինեց 746,000 աղիւս : » Անգլիոյ խորհրդարանին մէջ անգամ մը վի- ճաբանութիւններն այնչափ երկարեցան որ գրեթէ բոլոր անդամները հիւանդ եղան կամ վաստակաբեկ : 652 անդամներու մէջ երկու անձ միայն անմլտա մնացին , եւ ա- սոնք ալ ոգելից ըմպելի բնաւ գործածած չէին :

Երիտասարդ մը չարաչար կ'աշխատէր տարին 600 կամ 700 թալէր շահելու : Ա- մուսնութեան օրը մտեցաւ : Հարսը իւր մեծ հօրմէն ժառանգած էր 500 թալէր , եւ այս գումարն ամբողջ ծախք ըրաւ հարսան- եաց զգեստի : Յետոյ այր եւ կին երկու սենեակ վարձեցին տան մ'երրորդ յարկը : Երիտասարդը թէ եւ չարաչար կը յոգնէր ցերեկները , սակայն եւ այնպէս աւելորդ գործ կ'առնէր գիշերները գործելու : Աչ- ուններուն լոյսը գրեթէ մարած էր գիշեր- ներն աշխատելուն համար : Ինչո՞ւ այս ե- րիտասարդը գիշերուան աշխատութիւն կ'ա- ւելցունէր ցերեկուան աշխատութեան վը- րայ : Հարկաւ դրամ շահելու համար : Ին- չո՞ւ կ'ուզէր դրամ ունենալ : Անձրեւոտ

օրերու համար քիչ մը բան վար դնելու : Ո՛հ , իւր կեանքն ապահովագրելու որպէս զի մահուանէն ետքը կինը մուրացիկ չ'ըլլար : Ո՛հ : Գիշեր ցերեկ կ'աշխատէր 150 թալէր աւելցունելու որպէս զի կինը անով մետաքսեայ շրջագգեստ գնէր : Կնոջ քոյրը լսեց զայս , եւ նա չէր ուզեր իւր քրոջմէն ետ մնալ : Աղքատ էր , բոլոր գիշերն աշխատելով բաւական դրամ աւելցուց մետաքսեայ շրջագգեստ գնելու : Երկու քոյրերուն օրինակը տարափոխիկ եղաւ , եւ այն փողոցին մէջ ամէն կին մետաքսեայ շրջագգեստ ունէր . . . :

Կան շատ մարդիկ որ իրենց թերութեանց պատճառաւ կը մնան աղքատ : Բազումք յայսպիսեայ կրնային ունենալ բարեկեցիկ վիճակ , բայց իրենց շահածը ծխեցին , կամ ծամեցին եւ կամ խմեցին , եւ կամ իրենց կարողութենէն վեր ծախք ըրին . . . մինչ այլը նոյն վարձով եւ խնայելով եղած են դրամի տէր : Կը ճանչնամ մարդ մը որ միշտ կը գանգատէր իւր աղքատութենէն եւ կը արտնջէր հարուստներու դէմ , բայց նոյն ատեն ինք կը պահէր երկու շուն , կը ծխէր եւ կը ծամէր , եւ մինչեւ կզակը լի էր հափփիով եւ գարեջուրով : Եթէ այս երկրին դրամատէրերուն մէկ վեհանձնական բարեհաճութեամբ կամ կառավարութեան մէկ նոր օրէնքով Ամերիկայի գործաւորաց թոշակին վրայ 25 կամ 30 եւ կամ 100 առ 100 յաւելում ըլլար , այս յաւելումէն շատ օգուտ պիտի չը բաղէին հարիւր հազարաւոր գործաւորք , եթէ չը թողուին ոգելից ըմպելիք գործածել : Այո՛ , մինչեւ որ գործաւորք չը թողուն այդ գէշ սովորութիւնն , աւելի դրամ՝ կ'ըլլայ պատճառ աւելի կորուստեան . . . աւելի թոշակ կը բանայ աւելի ծակեր ըսակին կամ պարկին մէջ :

Այս առաւօտ ազգարարութիւնս է այն գործաւորաց որ սկսած են աշակերտիլ հուրաքիչ շիշին , գարեջրոյ դորակին , գինւոյ բաժակին : Գործաւորք , լաւ ակնարկ մը նետեցէք թշուառութեան վրայ այն մարդուն որ գերի է ոգելից ըմպելեաց , եւ յիշեցէք թէ հազարաւորք կը գիմեն դէսլ այդ վախճանը : Ալքոհոյի աշակերտը կը կորուսանէ իւր արժանապատուութիւնը : Այն ինչ կը զարթնու մարդ եւ կը գտնէ զինք գերի ոգելից ըմպելեաց , կը զգայ զանձն

ստորնացեալ : Անոր բնութեան երեք չորրորդը կործանած է : Կ'ըսէ այնպիսի բաներ զորս պիտի չ'ըսէր , կ'ընէ այնպիսի բաներ զորս պիտի չ'ընէր եթէ չ'ըլլար արնեցեալ : Լոր մարդ իւր կամաց զօրութեան ինը տասներորդը տուած է ոգելից ըմպելեաց , առաջին բանը զոր կ'ուզէ ընել՝ է համոզել իւր խօսակիցն թէ կրնայ ըմպելու սովորութիւնը թողուլ : Երբ որ ուզէ : Չը կրնար : Փղշտացիք կապած են անոր ձեռուըներն և ստուըներն , ածիլած են անոր գլխուն մազերը , եւ անոր դարձնել կուտան մեծ արհաւիրանաց աղօթոյ քար : Չը կրնար թողուլ ըմպելու սովորութիւնը : Կրնամ ապացուցանել զայս : Արեցոյցը զիտէ թէ իւր ընթացքն աւեր եւ կործանում կը բերէ իւր անձին վրայ : Կը սիրէ իւր անձը : Եթէ կարենար թողուլ ըմպելու սովորութիւնը , կ'ուզէր թողուլ : Չը կրնար : Թերեւս կրնար թողուլ երեք ամիս կամ տարի մ'առաջ : Խնդրէ անկէ թողուլ ըմպելիք ամիս մը , բայց չը կրնար :

. . . Արեցութեան մէջ կայ կէտ մը որով եթէ անդին անցնի մարդ , այլ եւս չը կրնար թողուլ ըմպելու սովորութիւնը : Ալքոհոյի գերիներէն մին ըսաւ անգամ մը քրիստոնէի մը . « Տէր , եթէ ըսուէր ինձ թէ մինչեւ վաղը գիշեր չէք կրնար գաւաթ մ'ըմպելի ձեռք բերել , եթէ չը հաւանէի բոլոր մատուըներս կտրել տալ , կ'ըսէի անմիջապէս » . « Բերէք տապարը , եւ այժմ իսկ կտրեցէք մատուըներս » : Ունիմ ի Ֆիլատէլֆիա սիրելի բարեկամ մը՝ որոյ եղբորորդին եկաւ օր մը իւր հօրեղբոր քով , և երբ խըրատ տրուեցաւ երիտասարդին թողուլ ըմպելու սովորութիւնը , երիտասարդն ըսաւ . « Հօրեղբայր , չե՞մ կրնար ըսուլ : Եթէ առջեւս ըլլար թնդանօթ մը լեցուած մինչեւ ի բերան , եւ գինւոյ բաժակ մը դրուած թնդանօթին բերանը , եւ գիտնայի իսկ թէ թնդանօթին կրակ պիտի տրուէր ճիշդ այն միջոցին երբ ես երթայի առնուլ գինւոյ բաժակը , դարձեալ կ'երթայի , վասն զի չեմ կրնար ապրիլ առանց գինւոյ » : Ո՛հ , տխուր բան է մարդու համար զարթնուլ այս կենաց մէջ , եւ զգալ թէ ինք գերի է : Այսպիսի մէկը կ'ըսէ . « Կար ժամանակ որ կրնայի թողուլ ըմպելու սովորութիւնը , բայց այժմ չեմ կրնար : Կրնայի ապրիլ

պատուաւոր կենօր, և մեռնիլ քրիստոնէական մահուամբ, բայց հիմա չը կայ յոյս ինձ համար : Այժմ եմ մեռեալ, բայց ոչ թաղեալ : Քննող դիակ մ'եմ այժմ : Անմահ էակ մ'եմ վաղեալ երկաթեայ վանդակի մը մէջ, կը զարնեմ վանդակիս ձողերուն այնչափ որ վանդակին ձողերն եւ հոգիս արիւնով կը ծածկուին, բայց կարող չեմ դուրս ելնել : »

Ա'երթամ յառաջ եւ կ'ըսեմ թէ ոգելից ըմպելեաց աշակերտը կը կորուսանէ իւր Փիզիքական առողջութիւնը : Ժողովրդեան մէջ տարեւորք թերեւս կը յիշեն թէ տարիներ առաջ Տոգ. Արեշ այս երկրին այլ և այլ կողմերը չըջեցաւ եւ ելեկարացուց ժողովուրդն իւր ատենախօսութիւններով յորս ցուցուց ալքոնի գործածները մարդկային ստամոքսի վրայ : Իւր հետ ունէր եօթ կամ ութ պատկեր որովք կը ցուցունէր ոգելից ըմպելեաց աւերածն մարդու Փիզիքական դրութեան վրայ : Հազարաւոր մարդիկ այն վիրալից պատկերները տեսնելէ ետքն ուխտեցին յաւիտեան չըմպել ինչ որ կ'արբեցունէ եւ կը թունաւորէ զմարդ : Աստուած միայն գիտէ թէ ի'նչ սոսկալի տանջանք կը կրէ արեցողը : Տաւ կը բայէ կ'ընթանայ անոր ամէն ջիլին եւ ամէն մկանին վրայ : ցաւ կը կրծէ այնպիսոյն սոսկը, կ'այրէ զայն ամէն տեսակ բոցով, կը խայթէ զայն ամէն տեսակ թոյնով, եւ կը բերէ անոր վրայ ամէն տեսակ տանջանք : Ի'նչ սողուններ կ'ելնեն կ'իջնեն անոր գողգոջուն սըրունքներէն վեր վար : Ի'նչ ճիւղներ կը կենան անոր գիշերային բարձին վրայ : Ի'նչ հեծեծանաց ձայներ կը ծակեն անոր աւկանջը : Ի'նչ արհաւիրք կը պատուեն կ'անցնին անոր հոգւոյն մէջէն : Գելարան, պըրկոց, Հաւատաքննութեան տեսակ տեսակ տանջարանք, մահաշուք խարուկահանդէս, ասոնց ամէնը մէկէն կ'զգայ թունաւոր ըմպելեաց գերին : Երբէք գտնուած էք հիւանդանոցաց այն սրահները յորս ոգեվար կը տագնապին այս թշուառք . անոնց վիրաց քարշ հոտը հեռի հեռի կը մղէ հիւանդապահներն, եւ անոնց ձայները չեն դադրիր մինչեւ առաւօտ : Հիւանդապահը կուգայ եւ կ'ըսէ . « Լռէ, հանդարտ կեցիր, կտրէ ձայնդ : » Հիւանդապահին այս խօսքերը վայրկեան մը միայն ազդեցութիւն

կ'ունենան, վասն զի այն ինչ կը հեռանայ նա, թշուառք կը սկսին դարձեալ զօջել . « Ո՛վ Աստուած, ո՛վ Աստուած . օգնութիւն, օգնութիւն, ըմպելի՛, ըմպելիք տուէք . աւէք սա իժերն եւ ճիւղներն վրայէս, առէք վար զանոնք . ո՛վ Աստուած : » Այգա կը ճչեն կը կոծեն, կը փետտեն իրենց մազերը, կը խածնեն եղունգներն, մինչեւ արիւնիլ . կ'ողբան, կուլան եւ կը խնդրեն հիւանդապահներէն սպաննել զիրենք . « Գաշոյն մը մխէ փորս, խեղդէ զիս, առ սա դեւերը վրայէս : » Երեւակայական պատկեր մը միայն չէ այս : Այս ահեղ տեսարանը կարելի է տեսնել այս երկրին ամէն կողմն :

Գարձեալ արեցողն իւր ընտանեկան հանգիստն եւ երջանկութիւնը կը կորուսանէ : Փոյթ չէ թէ ոգելից ըմպելեաց անձնատուր մարդն որչափ կը սիրէ իւր կինն և զաւակները : Եթէ չը կարենայ ըմպելիք ձեռք բերել ուրիշ կերպով, կը վաճառէ ընտանիքն ի գերութիւն յաւիտեակական : Թէ որչափ տուներ կործանած են այս կերպով, Աստուած միայն գիտէ : Ո՛հ, կայ ուրիշ բան որ այնպէս կործանէ զմարդ այս կենաց համար եւ այնպէս դատապարտէ զնա հանդերձեալ կենաց համար որպէս ոգելից ըմպելիք : . . . Մի՛ ըսէք թէ մարդ կրնայ ըլլալ երջանիկ երբ կը բեկանէ, կը կեղեքէ նա իւր կնոջ սիրտն եւ ցնցոտիներ կը հագուեցնէ իւր որդւոց : Այսօր այս երկրին փողոցներուն մէջ եւ ճանրայներուն վրայ կան մանր տղայք բոկոտն, որոց մազերը սանտրուած չեն եւ երեսներն են ալտով ծածկուած . ասոնք այսօր եկեղեցիները պիտի ըլլային եւ ձեզ պէս մաքուր հաբուած, եթէ ոգելից ըմպելիք կործանած եւ ի գերեզման առաջնորդած չ'ըլլային անոնց ծընողներն : Ո՛հ, ըմպելիք, թշնամի Աստուծոյ, կապտիչ կործանիչ տանց, անյագ անդունդին զօհեր գրող պաշտօնեայք, կ'ատեմ զձեզ :

Պերճախօս քարոզիչը շատ ազդու նկարագրութիւն մը կ'ընէ հանդերձեալ աշխարհի մէջ արեցողաց թշուառ վիճակին, եւ կը շարունակէ այսպէս . Հանդերձեալ աշխարհի մէջ Աստուծոյ ներկայութենէն զրկուիլը չէ որ պիտի աւելցունէ արբեցողին թշուառութիւնը : Չեմ կարծեր որ լու-


սոյ բացակայութիւնը պիտի տանջէ զարբեցողն: Չեմ կարծեր որ սրբութեան բացակայութիւնը պիտի ըլլայ անոր շարժարանք: Կարծեմ թէ մեծագոյն տանջանք եւ շարժարանք պիտի ըլլայ ոգելից ըմպելեաց բացակայութիւնը: «Մի նայիր գինւոյն կարմրութեանը. դաւաթին մէջ իւր գոյնը ցուցունելուն եւ շիտակ վազելուն, անիկա ետքը օձի պէս կը խածնէ եւ քարբի պէս կը խայթէ:»

Քարոզիչը կը յիշէ օրինակն այն կանանց որ 10-12 տարի առաջ Օնիայի մէջ աղօթքով եւ երգերով վանեցին ըմպելիք հազար տունուոր գիւղէ մը: Այսօր այս քաղաքին մէջ, կ'ըսէ, եթէ գտնուին երեք հազար կանայք որ իրենց սիրտերն եւ ձեռուները տան ոգելից ըմպելեաց դէմ կուռելու, ես խօսք կուտամ գինեաւանց դէթ երեք չորրորդը փակել երեք ամսոց մէջ: Երբ երեք հազար նուիրեալ կանայք բանակ մը կազմեն, եւ մէկը չը գտնուի անոնց առաջնորդելու, ան ատեն ես իբրեւ պաշտօնեայ Բարձրելոյն Աստուծոյ, կ'անցնիմ բանակին գլուխն եւ կը գոչեմ. «Եկէք, քրիստոսասէր կանայք, եկէք ձեր երգերովն եւ աղօթքներովը. ձենէ մասնք թող յարձակին թշնամոյն աջ թեւին վրայ, եւ այլ՝ ձախ թեւին վրայ: Օն յառաջ. Աստուած զօրութեանց ընդ մեզ է. Աստուած Յակոբայ մեր ապաւէնն է: Անկցի՛ն ըմպելեաց խանութներն:»

Յետոյ ազլու յորդոր կուտայ քարոզիչն իւր ունկնդրաց Աստուծոյ օտար ինելով հեռի կենալ ըմպելիքէ: Երբ, կ'ըսէ, դատաստանի գիրքերը բացուին, եւ տասը միլիոն արբեցողք գան լսել իրենց դատասպարտութիւնը, կ'ազեմ վրայ բռնել զամէնքը թէ այս առաւօտ յերկիւղ Աստուծոյ եւ ի սէր ձեր հոգւոյն ես ըսի ձեզ ամենայն քաղցրութեամբ եւ սիրով զգուշանալ յայնմանէ որ արդէն իւր ազդեցութիւնը գործել սկսած է ձեր ընտանեաց վրայ, մարելով ձեր տանց լյսերէն զոմանս: Ո՛հ, եթէ կարենայիք միայն լսել այս առաւօտ թէ Արքեպիսկոպոսի դեւն գինեմուլաց ոսկրներով կը հնչեցնէ անմահ հոգիներու մահուան քայլերովը, ինձ կը թուի թէ գինւոյ բաժակին վրայ նայիլը միայն սոսկում պիտի ազդէր ձեզ, եւ ըմպելոյն գոյնը ձեզ պիտի տար խորհիլ հոգ-

ւոյ արեան վրայ, և բաժակին երեսի փըրփուրը պիտի յիշեցունէր ձեզ այսահարի շրթանց փրփուրը, եւ այս առաւօտեան պաշտամանէ ետքը տուն դառնալով ձուր պիտի դնէիք եւ աղօթէիք առ Աստուած թէ ձեր զաւակներն այս գէշ մոլութեան գերի տեսնելէ աւելի կ'ընտրէիք տանիլ զանոնք գարնանային սոյժառ առաւօտ մը ի գերեզմանատուն եւ դնել զանոնք իրենց վերջին հանգստեան վայրը, մինչեւ որ ի ձայն հարաւային հողոց ծաղիկներ փրթթէին եւ ծածկէին անոնց գերեզմաններն. ծաղիկներ՝ քաղցր մարգարէութիւնք յարութեան: Աստուած ունի բայտսան այսպիսի վրաց: Բայց ի՛նչ ծաղիկ երբէք բուսած է ի շունչ խամիչ հողմոյ որ կը փչէ արբեցողի մը գերեզմանին վրայ:»

ԵԱՆՔԻՆ



ԱՆՇԵՏԱՑԱԾ ՍԵՐՈՒՆԴ ՄԸ

Մ Ա Ս Ն Ա

Ս Ե Դ Ր Ա Ք

(Շար. նախորդ թուէն)

Տարի մը կայ որ երիտասարդ երկրաչափն իր պաշտօնին գլուխն է, ուր յաջողած է իր պաշտօնակցաց եւ մեծերուն յարգանքն ու համակրանքը շահիլ: Ատանայի դաշտին մահաբեր օղը բարւոքելու համար եղած ջանքերէն եւ ո՛չ մին յաջողած էր. Սեղաք այս մեծ ու մարդասիրական նպատակին նուիրեց ինքզինքն. իր պատրաստած յատակագիծն ու ծրագիրը բոլորովին պիտի մաքրէին այդ տղմուտ դաշտին վատառօղ ժանտահոտութիւններն, ու երկրագործին պիտի տային ընդարձակ ու բարեբեր հողեր. Սեղաքի առաջարկութիւնը բոլոր գաւառին համար կենսատու խնդիր մ'էր եւ իր ծրագիրն ամբողջապէս ընդունուեցաւ. զա-

ւառին կառավարիչը Մէճիտիէի շրրորդ աստիճանը խնդրեց այս եռանդուն պաշտօնակալին համար, որ անմիջապէս շնորհուեցաւ: Այլ գանդատելու տեղի չի կար. բաղդը կ'սկսէր ժպտալ: Իր առանձնութեան մէջ չէր յուսահատած երբէք. սիրուհւոյն պատկերն հոն էր որ զինքը կը քաջալերէր: Քայլ մ'եւս եւ ահա առաջին երկրաջափ պիտի անուանուէր: Ո՛հ, այն ատեն բաց ճակատով պիտի դառնար Պոլիս ամուսնութեան խնդրելու իր սիրած աղջիկը. ընտանիքը չէր կրնար դժկամակիլ այլ եւս: Երազէ իրականութեան մէջ անցնելու համար այս քայլը միայն մնացեր էր: Սեղաբէ իր աշխատութիւնը կրկնապատկեց. կառավարութեան պաշտօնէի մը յարմար հանդարտ գործ ունէութիւն մը չէր, այլ հիւանդոտ տենդէ մը վարակեալ անձի մը նման կը վարէր իր անտանելի աշխատութիւնը: Չորս մարդու գործ էր ստանձներ ու քսան մարդու գործ կը տեսնէր. անիմանալի պատերազմ մ'էր զոր ժամանակը փութացնելու համար կը մղէր ամէն օր. պաշտօնի բարձրացում խոստացեր էին իրեն, բայց վեց ամսէն առաջ չէր կրնար կատարուիլ. ապրիլի վերջն էին. վեց ամիս՝ վեց տարուան շափ երկար թուեցաւ իր անհամբեր սրտին: Եթէ զաշխարհ բեռցընէին իր ուսին վրայ այս պայմանաժամը կարճցնելու համար, յօժարութեամբ պիտի ընդունէր այս նոր Աթլասը:

Մէսաժըրիի Քամոսճ երկկայմ շոգեհաւան, որ այն ատենը Պոլսոյ եւ Աղէքսանդրիոյ միջեւ թղթատարութիւն կ'ընէր, իր շարժութեան ուղեւորութիւնը կատարելով մայիսի մէջ կիրակի առաւօտ մը Վոսփորի ջուրերը կը մտնէր նոր հարսի մը պէս քծնելով: Նաւուն կամրջին վրայ երիտասարդ ուղեւոր մը կը տեսնուի գունաթափ ու գողգոջուն. մակոյկներն անմիջապէս կը շրջապատեն նորեկ շոգեհաւան. ասոնց միոյն մէջ Տիգրան կը գտնուէր որ ասոնց սպասելու շոգեհաւանին կենալուն, չուաններէն վեր ելնելով դէպի երիտասարդը վազեց ու զայն ողջագուրեց. Տիգրան, Սեղաբէ, այս երկու բառերը միասին լուեցան ու երկու բարեկամներն արտասուելով իրարու գիրկ նետուեցան.

ըիչ մ'ատեն հեծկլտանքէ ուրիշ բան չի լուեցաւ. արգարեւ սրտայոյզ տեսարան մ'էր զիտել այս երկու երիտասարդները՝ զոր ճակատագիրն եղբայրութենէ աւելի սերտ կապով մը միացուցած էր: «Սրիացիք, Սեղաբէ» ըսաւ վերջապէս Տիգրան վեր առնլով ու համբուրելով իր բարեկամին դալիահար ճակատը. «Ճշմարիտ է ուրեմն», հարցուց տարաբաղդն հազիւ լսելի ձայնով մը:

Տիգրան շի սպտասխանեց, այլ տուն մը միայն նետեց ուղեւորին ոտքը:

Տիկին եւ Պ. Ք. պատիւ ունին խընդրել. . . . որ հաճին ներկայ գտնուիլ այս կիրակի առաւօտ իրենց Սուրբիկ դատեր վսեմ. Արամ էֆէնտիի հետ պակլման արարողութեան որ պիտի կատարուի Գատը-Գիւղի Ս. Թագաւոր եկեղեցւոյն մէջ:

Ահա ինչ որ ուղեւորին շուրած ու նըսեմացած ակնարկը կարդաց այս հեշտարոյր ու ոսկետառ տունակին վրայ: Ստոյգ էր ուրեմն այն անհաւատալի գոյժն. եւ ինքն երեսի վրայ թողլով իր պաշտօնն, առանց վայրկեան մ'սպասելու վազեր եւ հասեր էր այն օրն հազիւ յորում Սուրբիկ պիտի պսակուէր:

Գատը-Գիւղի Ս. Թագաւոր եկեղեցին քառակուսի, պզտիկ ու դեղեցիկ շէնք մ'է եւ հոյակապ մարդու մը առատածեռնութեան արդիւնք: — Խուռն բազմութիւն մը եկեղեցւոյն ամէն կողմը կանուխէն գրաւած է. բակը, բանկալը, խորհրդարանին մէջ անգամ կենալու տեղ չի կայ. հետաքըքի ամբոխն հրախրելոց մուտք անգամ թողած չ'է:

Ժամը վեցն է. հանդիսին տէրերն հըրաւիրեալներուն հետ հասան ու անանցանելի մարդկային պատնէչէ մը թափանցելով յաջողեցան եկեղեցին մտնել. պսակի արարողութիւն կայ. հանդիսականներուն մէջ կը նշմարուին Պոլսոյ առեւտրական տանց գլխաւոր ներկայացուցիչները, դատական իշխանութեան անդամներ եւ հայազգի բարձրաստիճան պաշտօնատարք. իեսայն քառասնամեայ պաշտօնակալ մ'է՝ որ վայելչապէս կը կրէ Միւթէմայիզի ոսկեճամուկ համազգեստը. հարսն հագած է սպիտակ

կօծէ երկար շրջագգեստ՝ հարսանեկան թափանցիկ շղարշով ու իր կոհակածուսի մազերով ծածկուած . դիւրին է նշմարել բարեձեւ հասակ մը, նեղ, նեղ, ասի մէջ ամփոփուելու ու ձգմուելու չափ նեղ մէջը մը որ թաւալուն, հպարտ ու շագուցիչ կուրծ մը կը կրէ, ճակատ մը անամպ արշալոյսի պէս պայծառ, աչքեր սեւ ու խոշոր որոց վրայ շուք կուտան իր երկար բիբերը, բերան մը գարնան վարդի պէս թարմ ու կարմիր . քիթն ուղիղ, ռունգերն ուռած, թափանցիկ, դիւրայոյց ու հրապուրիչ . սպիտակ ձեռնոցներ մինչեւ թեւերը կ'երկարին ու երեւան կը հանեն անոր քնքոյչ ու աննմանելի գիծերն, ու նոյնպէս ձերմակ սընդուսէ կիսակօշիկներ կը սեղմեն անոր փոքրիկ ոտները .— Տասնեօթը տարեկան կայ այս աղջիկն, այս մեհեանին մէջ ճշմարիտ դիցուհին՝ սր կ'իշխէ բոլոր հաւատացելոց վրայ :

Պսակի արարողութիւնն սկսաւ, մահուան ողբերու նման տխուր երաժշտութեամբ մը . միշտ խորին տալաւորութիւն մը յառաջ կը բերեն այս տխրանուագ աղօթքներն . ապստամբ միտքը սրահ մը կ'ընդարմանայ ու հոգին հմայութեան մը ներքեւ կը վերանայ ու անմատչելի երկնագաւառներու մէջ կը սաւառնի . բարեպաշտ լուսութիւն մը կը տիրէր . պսակադիր քահանայն ձայնը բարձրացուց ու փեսին դառնալով՝ « Տէ՛ր ես այս օրիորդին » ըսաւ հանդիսաւոր հարցումը կրկնելով . « Այո՛ » պատասխանեց փեսան գլուխը խոնարհեցնելով . « Եւ դու հնազա՞նդ ես, աղջիկս », ըսաւ քահանայն օրիորդին ուղղելով խօսքն . աղջիկը վեր առաւ գլուխն . . . երկու սլաքներ, ո՛չ, երկու հրացայտ շանթեր պատահեցան իր մոլորեալ ակներկին . բողբող, սպառնացող, որոտացող ձայն մը կարծեց լսել, նենգաւոր բառը կարծես ականջին զարկաւ, աչքերը մթազնեցան, խուլ բժժանքով ականջը լեցուեցաւ ու դէմքը մահատիպ թալկութիւն մը գրաւեց . Սեդրաք իր բարկացայտ նայուածքը աղջկան վրայ սեւեռեր էր :

Սեդրաք, անշուշտ իրական բան մը չ'էր կրնար ըլլալ ասի . այլ արհաւիրաց տեսիլ մը զոր իր խռովեալ խղճմտանքը միայն արտադրած էր : Սեդրաքի ներկայութիւնն անբացատրելի էր : Այն վայրկեանին իսկ ուր նոր

ուխտով մը աւելի հին, աւելի նուիրական ուխտ մը կը դրժէր, ճիշդ այդ վայրկեանին երիտասարդին նայուածքը մահատու դաշոյնի մը պէս շողացեր էր աչքին . թէ որ ապտակ մը ուտէր, յօժարակամ պատրաստ էր ներելու . այլ այս անխօս ներկայութիւնն այնչափ աւելի նախատալից թուեցաւ որչափ լռին ու իրաւացի էր :

Մարդս ամէնէն աւելի անիրաւ եղած ատենը կը բարկանայ . նոյն բանը պատահեցաւ Սուրբիկին . կանացի սիրտն անյատակ ու անքննելի վիճ մ'է . ճշդիւ չ'է կարելի անոր հոգւոյն վիճակն հաստատել : Եւ սաչափն ստոյգ է սր ուրիշի մը հետ ամուսնանալ որոշելով հանդերձ՝ Սուրբիկ իր վաղեմի բարեկամը յաւիտեան կը սիրէր : Անոր հեռացումն ու տամանելի վիճակն իր գըթութիւնը շարժեր էր, եւ սէրը տարօրինակ երեւոյթ մը կ'զգենու երբ գթութեան կը միանայ . տեսակ մը չնորհ կը դառնայ որ տուողին բարի կամեցողութեան ձրգուած է . սէրը չի մուրացուիր այլ կը պահանջուի . ողորմութիւն մը չ'է այլ տուրք մը :

Երիտասարդին վիճակն աղջկան մօտ աւելի պաշտպանութեան զգացում մը յառաջ բերած ու այս կերպով իր սէրը պարտականութիւն մը լինելէ դադարած էր առանց անհետանալու . մ'ըս կողմէ իր ընտանեաց ճնշումն որ բռնութեան մօտեցած էր, իրեն խոտացուած ամուսնոյն բարձր դիրքն ու պզտիկ փառասիրութեան զգացում մը՝ ամէնքը միացեր էին հեռաւոր անձի մը տըրուած խոստումը մէկդի ընելու : Բայց այս յանկարծական վերադարձն հաշուի մէջ չ'էր . ինչպէս ըսինք Սուրբիկ իր մանկութեան տարաբաղք ընկերը միշտ կը սիրէր . զայն տեսնելուն յիմար փափագ մը ունեցեր էր անոր գիրկը նետուելու ու արտասուելու . բայց առանց կանխաւ իրմէ ո՛ր եւ է բացատրութիւն խնդրելու՝ անոր այս յանկարծական ներկայութիւնն, հրապարակաւ զինքն ամօթահար ընելու անողբ փորձ մը ու թշնամանք մը նկատեց եւ իր բոլոր սիրոյն հակառակ՝ զինքը նուստացնելու այս ջանքը խիստ ծանր եկաւ իրեն : Ինքնիրեն երիտասարդին համար մեծ զոհողութիւններ ըրած ըլլալ կը կարծէր ու դիմացինն ապերախտ համարեց այս թշնամութեան ցոյցին

համար ու այլ եւս ամէն բարեկամութիւն վերջացած : Յանցանքն իրը չէր եթէ գացեր էր աշխարհիս մէկ ծայրն ու անպաշտպան թողեր էր զինքն անգուժ հօր մը բռնութեանց ներքեւ ու հիմա եկեր էր իրրեւ թէ համար պահանջելու իրմէն : Զինքը սիրել խոտանալով յաւիտենական գերութեան դաշն կուած չէր ու Սեդրաք իրաւունք չունէր այնչափ ատեն անտարբեր ու լուռ կենալէ վերջը ճիշդ պսակի արարողութեան ժամուն սպառնալից ստուերի մը պէս երեսին զարնելու իր ընթացքը : — Նահանջել կարելի չէր այլ եւս . բոլոր գիւղին մէջ ծաղր ու ծանակ ու շարահրատ ամբօթի մ'առջեւ ամօթահար ըլլալու վախը մեռնելէ աւելի սարսափելի էր :

Ու Սեդրաք ճիշդ զինքն այս նուաստութեան մատնել եկեր էր անշուշտ Այս մտածումները մէկ մանրեկրորդի մէջ Սուրբիկի մտքն անցան, ու յիմարուհին՝ ինքնիրեն եթէ ոչ պարկեշտութիւն գէթ արգարացում մը գտնել կարձեց իր վարմունքին մէջ . նա մանաւանդ աչքին զարկեր էր երիտասարդին ճամբորդութեան անձուռի հագուստներն հրաւիրելոց սեւ ու անքննադատելի զգեստներուն մէջ . անոր արեւէն ու հողմէն սեւցած երեսը չը գիտեմ ի՞նչ վայրենութեան երեւոյթ մը տուեր էր անոր սուվորաբար արտում երեսին ու անմիջապէս մեծ տարբերութիւն մը նշմարեր էր երիտասարդին ու իր ամուսնոյն մէջ :

Սեդրաք իրեն համաստիճան մէկը չէր . իրմ վար դասի մը սլառականող անձի մը կողմէն , նոյն իսկ թէ որ պաշտեցեալ մէկը լինէր այդ անձը , Սուրբիկ թշնամանքի մը հանդուրժողներէն չէր ու չի հանդուրժեց . ամբարտաւան կերպով մը վեր առնելով իր գլուխն՝ « Այո՛, Տէր Հայր », ըսաւ քահանային , « հնազանդ եմ » :

Այսպիսի հանդիսաւոր վայրկեաններու մէջ բնական եղող յուզումէ ի վատ ոչ ոք բան մը նշմարեց հարսին դէմքին վրայ . այս անդարձ որոշումը կայծակի արագութեամբ տրուեր էր անոր մտքին մէջ ու մէկ բառով ճակատագիր մը խորտակեր էր : Ահա այսպիսի խախուտ ու անիրաւ պատճառաբանութեան մը կը յենուր այս անողջ որոշումն , որ մանկութեան ու պատանութեան

ամէնէն նուիրական կապերը դանակի մը պէս մէկ հարուածով կը ջնջէր . ամսոսն . ու հարկ է աւելցնել որ այս աղջիկը թերեւս լաւագոյն կիսն էր աշխարհիս վրայ :

Սեդրաք իր պաշտօնատեղին չի վերադարձաւ եւ ոչ իսկ հրաժարական մը կամ լուր մը զրկեց . ի՞նչ օգուտ այլ եւս : Այս անկուր մասնութիւնն ահարկու հարուած մ'եղաւ զլխուն որ զինքն ընդարմացուց ու աղչեցուց . իր սէրն , իր անձնուիրութիւնն , այս ուխտագրութ աղջիկն , այս հարսանիքըն , ուրիշ բան չէին կրնար լինիլ բայց անհաճոյ երազ մը ուսկից սթափիլ կ'ուզէր : Ինչ որ հզորագոյն յուզումները չէին կարողացեր ընել այս ուժով մարդուն վրայ , մասնաւոր սէրը կարողացաւ ընել : Սեդրաք ընկճեցաւ . իր սրտէն զարկեր էին զինքն . այս աղէտը խորտակեր էր իր հոգւոյն միակ զսպանակն , և ուղեղը չէր կըրցած դիմադրել այս անակնունելի բաղխման . բժիշկները մօտալուտ խելագարութեան նշաններ նշմարեցին անոր վրայ :

Եւտի - Գուլէէն Վէլի - Էֆէնտի երթալու ճամբուն վրայ ամայի եւ առանձնացեալ դաշտի մը մէջ երկյարկ , փայտաշէն ու քառակուսի շէնք մը չի բարձրանար այլ կը տարածուի . հին , գրեթէ խարխուլ ու ընդարձակ յարկ մ'է որուն յաւիտենական դեղին դոյնն առածի կարգ անցած է . զիմացը կայ փոքրիկ պարտեզ մը որուն մէկ մասը բանջարեղինաց յատուկ է ու միւս մասն հասարակաց զբօսավայր մը լինելու յաւակնութիւնն ունի : Աղբիանուպոլսոյ շոգեկառքն անոր արեւմտեան կողմը քերելով իր երկաթէ ճամբուն վրայ կը սրանայ :

Այս պատմական շէնքն Հայոց Ազգային Հիւանդանոցն է : Ես չեմ նայիր ո՛չ անոր փլատակ սպառնացող պատերուն և ո՛չ աղքատիկ անկողիններուն . անոր տխուր ճակատը վարդարող աղբայն անունն իմ սիրտս կը գրաւէ ու անմիջապէս կը սիրեմ այս քայքայուն շէնքը :

Օրինաւորութիւն , ճշգրտութիւն ու հայրական հոգածութիւն մը կը տիրեն այս ճշմարիտ ազգային հաստատութեան մէջ : Անոր հիմնադրին նուիրական ոսկերտիքն

Մայր-եկեղեցւոյ մէջ կը հանգչին, այլ անոր պղզանուէր ոգին յաւիտեան կը հսկէ այս սփոփանաց յարկին վրայ :

Հիւանդանոցին մէջ մաս մը կայ որ ամուր պատերով բաժնուած է ու երկաթէ հաստատ ձողեր անոր պատուհանները կը զարդարեն . 40 - 50 հոգւոյ չափ բազմութիւն մը կ'սպրի հոն հզօր ու որոտածայն պահապանի մը ազդած սարսափին տակ հնազանդ : Գըլըսինին պղտիկ գլակ մը , լայն ու հաստ բողէ շապիկ մը , նոյնպէս լայն ու միւսնոյն կտաւէ տաքատ մը այս թշուառութեան զինուորներուն միօրինակ համազգեստն է : Մեծ մասը նստած է փայտէ տախտակամածի մը վրայ ու շրջանակ մը կազմած է : Իէմբերներն լուրջ ու խոփու , ակնարկներն շրջուն ու մոլորեալ , ձայներնին ցած ու հանդարտ , այս մարդիկը նորեկ այցելուին աչքին կարծես ծանր ու դժուարին խնդրոյ մը համար խորհրդակցութեան մէջ են . մաս առ մաս իրարու հետ կը խօսին , կը ստասխանեն , կը վիճին ու առանց մօտէն ակննջ տալու անոնց խօսակցութեան անկարելի է դատել այս տարաբաղդ ներուն վիճակը :

Տիմարներն են ասոնք :

Ահաւոր ու կարեկցութեան արժանի տեսարան :

Այս միազգեստ տարաբաղդներուն մէջ երիտասարդ մը կը նշմարուի իր զուարթ ու խնդուն երեսոյնն ու համակրելի ձեւերովը . արագ , գրեթէ տենդային արտասանութիւն մը ունի . հակառակելու չի գար անոր , անմիջապէս կը զայրանայ ու կ'սպառնայ . իր բաղդակիցներէն միոյն հետ կը խօսի շարունակ որ իրեն մտիկ չ'ըներ . կը խօսի ու կը խօսի , կարծես պատմութիւն մը կ'ընէ ու վճիռ մը կ'սպասէ անկից . — Ի՞նչ կը շաղկրատէ այս յիմարն . երբեմն կ'երգէ ու գիշերն անխօս լռութեան մէջ ամէնքը կը ձանձնան անոր սիրած երգերուն ողբալի շեշտը :

Այս յիմարը Սեղրաքն է :

Տարուան մը չափ ամէն բժշկական խնամք անօգուտ դառնալով , ընտանիքը սարտաւորեցաւ ազգային խնամոց յանձնել զայն :

Տիգրան ուրբաթ և կիրակի օրերն յատկացուցած է իր բարեկամին՝ որ զինքը չը ձանձնար :

Ի զուր նոր կայծով մը բորբոքել կ'ուզէ այս մարած հրաբուխն , ու արձագանք մը արթնցնել անոր խորայտակ սրտին մէջ . ամէն յոյս շատոնց վերջացած է ամէնուն համար եւ Տիգրան միայն կը յամուի բաղդին ու գիտութեան դէմ . իր այցելութիւններն անպակաս են : Հիւանդանոցի մարդիկներն յիմարին եզրայրը կը կարծեն այս նորափ երիտասարդն՝ որ իր հանգստութեան ու դրօսանաց ժամերը նուիրական պարտականութեամբ կը լեցնէ ու ամէն անգամ արտասուելով կը վերադառնայ :

Սեղրաքի այս մահացումը երկար չի տւււեց : Երկինք գթաց կարծես այս թշուառին . օգոտոտսի սկիզբները ծանր ժանտաւենդէ մը բռնուեցաւ ու տասնևութ օրուան մէջ հալեցաւ այս առիւծի պէս տըղան . ուրաթ երեկոյ մ'էր , օրհասական ճգնաժամն սկսաւ , վերջին պայքարը կենաց ու մահուան մէջ : Գոգցես բաղդին անուղք հեզնութեամբ հիւանդը պահ մը սթափեցաւ իր մահատիպ թմրութենէն . տըրտում նայուածքը չորս կողմը սեւեռեց , Տիգրանը միայն տեսաւ քովը , նշան ըրաւ անոր մօտենալու եւ իր սառ կտրած շըրթունքով համբուրեց երիտասարդին դատուկ ձակատը . ու քիչ մ'ատեն կամաց , խիտ կամաց ձայնով մը խօսեցաւ անոր հետ . . . կէս ժամ վերջը Սեղրաքի աստղը շիջեր էր :

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱԳ
(Շարունակելի)



ԲԱՐԻՁԻՆԱ

ՎԷՊ ԼՕՐՏ ՊԱՅՐԸՆԻ

Ը.

Ի վաղիւ առաւօտուն հարցափորձեալ ուսանի
 Ի խըմբէ մերձակայիցն ըզզանաղան վէսս անցից՝
 Ըզհանդէս ամենայնի՝ զորս երկընչէր նա գիտեւ,
 Ըզյանցանս առաջիկայս եւ զհանդերձեալ աղէտս իւր :
 Խընդրեն նաժիշտք Բարիգինայ, հաղորդք շարեացն ընդ երկար՝
 Չանձանց փըրկութիւն եւ կուտակեալ դիզանեն
 Չամօթ, ըզյանցանս եւ զդատակնիքն ըզնովաւ .
 Չիք այլ հնար ծածկելոյ — ի վեր հանեն զամենայն .
 Պատուեն ըզբովանդակ անցից իրացն հանդամանս,
 Որովք մարթէին դիւրեանց ըզբանս հաստատել :
 Ազոյի սիրտն եւ ականջն ընդ յայտնութիւնն տանջեալ,
 Ոչ եւս այլ կարէին ըզգալ ինչ այլ եւ լըսել :

Թ.

Չէր նա ժամավաճառ դեզերանաց համբերող .
 Ի սենեակ խորհրդոց վաղընջական տուն Էսդեայ
 Գըլլապետըն բազմի արդարութեան ի դահայս .
 Անդ էին միահամուռ աւազանին եւ սահնակք ,
 Եւ նորա առաջի շարեացապարտ կան ամուրն .
 Երկօրեան մանկահասակք — գեղ միոյն, գեղ յանկուցիչ .
 Իսկ միւսըն գինաթափ, եւ ձեռքն արկեալ ի շըլթայս,
 Ո՛վ Տէր, այսպէս որդին յանդիման հօրըն կայցէ :
 Այլ բեզ այդպիսի՝ հարկ ի վերայ կայ, շիւկոյ .
 Չի լուիցես զամօթոյ վէպն եւ ըզվըճիւ բարկութեան
 Սակայն նա չերեւի նկուն եղեալ ի ցաւոց,
 Թէպէտ անբարբառ կային շըրթուներն ցայն վայր :

Ժ.

Անդ անօր խաղաղական եւ դալկահար եւ լըռիկ,
 Վըճոյ դատակընքոյն Բարիգինա ըսպասէր .
 Քանի՛օն ընդհատ անտի մինչ խօսուն աչք իւր յառաջ
 Աըփուէին զուրախութիւն ի շողջողուն սենեկին,
 Ուր արք բարձրատոհմք ըսպաս առեալ նագէին,
 Եւ նըմանել ջանային վայելչութեան իւր գեղոյն,
 Բարբառոյն քաղցրութեան եւ երեսացըն շնորհաց,
 Ի դիմաց եւ շարժմանց եւ սիգածէմ գնացից
 Ժողովեալ դըլլային՝ շըբեղածոխ ըզնաղանս :
 Եւ եթէ յաչաց իւրոց բըլէր արտօսըր վըշտաց,
 Մարտիկք բիւրաւորք խիզախէին ընդ առաջ,
 Սուսերք բիւրաւորք նըլողէին անպատեան,

Ձոխ իւրոյ ատելութեան յանձրնս իւրեանց ընկալեալ :
 Արդ այժմիկ զի՞նչ եղեւ նա , եւ զի՞նչ եղեն եւ նոքա .
 Կարիցէ՞ հըրամայել , եւ հնազանդել տալ նոցա .
 Ամենեքեան առ հասարակ կան այժմ անփոյթ լռեցեայն .
 Աչք ակընկորեալք եւ կընճռախառըն ճակատք ,
 Ըզմիմեամբք ածեալ բազուկք , երեսք պաղեալ սառնամած .
 Հազիւ պատրուակեալ զարհամարհանըս չըրթանց ,
 Ասպետք եւ տիկնայք եւ ոստանիկք կան անդէն .
 Իսկ նա , ընարեալն ի սիրելոյն , որոյ նիգակ մահառիթ
 Անկեալ կայ յերկրի իւրոց աչացն առաջի ,
 Որ եթէ բազուկ նորա լինէր վայրկեան մի ազատ ,
 Մեռանէր կամ ըստանայր զազատութիւն իւր անդրէն .
 Ամուսնոյ ծընողին իւրոյ սեղեխ տարփածու ,
 Եւ նա ինքն առ նըմին կայ ի շըղթայս կաշկանդեալ ,
 Եւ շտեսանէ թէ ուռուցիկ աչք իւր լիւղած յարտասուս .
 Ոչ ընդ իւր թըշուառութիւն , այլ ընդ վիճակ սիրելոյն :
 Արտեւանունք՝ զորովք ի գոյն մանիչակի վառ երակք
 Յըսպիտակ շուշանագեղ հարկանէին մաքրափայլ ,
 Ի համարոյր սիրային հըրաւիրեալ ըզտեսողս ,
 Եւ խառնեալ բոսորերփեան փայլ ընդ կապոյտ ջերմաջերմ ,
 Անդ թըւին ամիոփեւ քան եթէ քօղ արկանել
 Շուրջ զաչօքն՝ որ կային ծանրադաղդաղք եւ անշարժք ,
 Եւ սակաւ առ սակաւ ողողէին յարտասուս :

ԺԱ .

Լայր եւ նա եթէ աչք չէին պընդեալ յիւր վերայ .
 Յաւք նորա , թէ ինչ ըզբայր , կային հարեալք ի թըմբիր .
 Ամբարձեալ ունէր զճակատըն խրոխտասպանձ եւ կանգուն ,
 Թէպէտ սուգ անմըխիթար էր ի սըրտին իւր բունեալ .
 Ոչ կամէր խոնարհիլ հանդէպ աչաց ամբոսին .
 Այլ ոչ համարձակէր ըզ՛արիզինա տեսանել ,
 Յիշատակ անցելոյն — գործ յանցանացն եւ սէր իւր ,
 Վիճակն առաջիկայ — սըրտմըտութիւն ծընողին ,
 Լաւացն ատելութիւն — վըճիռն յաստիս եւ յապայն —
 Եւ վիճակ սիրուհոյն , ո՛հ սիրտ իւր ոչ հանդուրժէր
 Ակնարկել միանգամ ի մահատիպն այն ճակատ ,
 Ապա թէ ոչ՝ գութք գորովոյ սըրտին իւրոյ մատնէին
 Ըզխիղճ մըտաց համայն չարեաց ի նըմանէ գործելոց :

ԺԲ .

Եւ Ազոյ խօսեցաւ . « Յերէկն իսկ դեռ տակաւին
 Ի հարսն իմ եւ յորդիս ես նազէի վառապանձ .
 Այդ անուրջ ցայգական յառաւօտուն պակասեաց .
 Չեւ կարճատեալ օրն առ երեկըս զըրկեցայց յերկողունց .
 Կեանք իմ մենաւոր թարչամեոցի տարածամ ,
 Քաջ է — եղիցի — ոչ ոք իցէ ի մարդիկ
 Որ ոչ իբրեւ զիս ինքնին ըզնոյն առնիցէ :
 Լուծան յօղակապք — բայց ոչ իմովըս ձեռամբ .

Թող այդպէս լինիցի — դատակընկըն է պատրաստ .
 Հիււկոյ , քեզ այժմիկ ահա երէցն՝ ըսպասէ ,
 Եւ ապա հատուցումն ըստ գործելոցդ յանցանաց .
 Օ՛ն երթ եւ մատո՛ յերկինս հայցուածս աղօթից
 Մինչ չեւ աստեղաց գիշերաճեմ երեւեալ .
 Տես թէ կարիցես ըզներումն ասա զըտանել .
 Վերինն ողորմութիւն կարէ ըզմեզսրդ քաւել .
 Բայց չիք վայր ի յերկրի , ուր երկոքեանս՝ ես եւ դու
 Ժամ մի կարիցեմք ի միասին շընչել զօր .
 Ողջամբ կա՛ց , զի ես ոչ ըզմեռանիլ քո տեսից .
 Բայց դո՛ւ , կին դիւրագայթ , դու ըզգըլուխ իւր տեսցես :
 Արդ չեմ բաւական տանել ըզխօսս ի կատար ,
 Ո՛վ կին մեզկախորհուրդ , աղէ՛ եւ դու ե՛րթ ի բաց .
 Ոչ թէ ես , ա՛յլ ինքնին քեզէն զարիւնդ այդ հեղուս .
 Թէ կարես տակաւին կեալ ըզկնի տեսեանդ այդօրիկ ,
 Ի կեանսըն վայելես՝ զոր պարգեւեմ ես առ քեզ :»

Թարգմանեաց
 ՊՕՂՈՍ ՄԻՍՔՃԻՅԱՆ
 (Շարունակել է)

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք

ՄԵՆԱՄԱՐՏ ՄԸ ԾՈՎՈՒՆ ՎՐԱՅ

Բարիզեան լրագրի մը մէջ կը գտնենք սիրոյ եւ յիմարութեան սրտայոյզ պատմութիւն մը , զրահան ոճով զրուած , յիմար կնոջ մը պատմութիւնն կսկիծալի եւ տխրաբոյր՝ զոր հեղինակն կը պատմէ իւր անձնական յիշատակաց խառնելով :

« Գանաչեանի յիմարուհին , տակաւին գեղեցիկ իւր սպիտակ մազերուն ներքեւ , այդ օր նուազ խենդուկ երեւցաւ մեզ , այն պահուն ուր ողջունեցինք զինքն , իւր պարտէզին ցանկապատին մօտ : Սովորութիւն ունէր այդ ցանկապատին կրթնիլ՝ դիտելու համար արեւուն տակաւ առ տակաւ անհետիւր զիմացի անտառին ոստերուն մէջտեղէն : Փոքրիկ ճամբայ մը կը բաժնէր նորա խրճիթը մեծ տափաստանէ մը , եւ այդ սիրահարի ուղի ընտրած էինք բաղաբին աղմուկէն փախչելու համար :

« Ամեն ութն օրն անգամ մը , նոյն ժամուն , սիրա ի խինդ , զգայնական փոքրիկ պտոյտ մը կ'ընէինք և միշտ ճամբուն ծայրը

կը տեսնէինք սպիտակ գլուխն յիմարուհւոյն որ ծաղրածու դէմքով մը կը ժպտէր մեր սիրոյն վրայ : Հեռուէն կը ճանչէր զմեզ , գլուխը կ'երերցնէր իւր թէ զմեզ պարսաւելու համար , եւ աչքերը մեր ետեւէն կը յատէր այնպիսի յամառութեամբ որ անհուն զըստութիւն կը պատճառէր մեզ :

« Օր մը , բարեւ տուաւ մեզ : Այս բարեւն այնքան կրկնուեցաւ որ ա՛լ մեր բարեկամուհին եղաւ :

« Անշուշտ սոսկալի եւ քաղցր յիշատակ մը կը գարթուցանէինք իւր մտքին մէջ , որովհետեւ երբեմն մեզէն կը փախչէր մեր մօտեցած ատեն եւ երբեմն մեզ կը կանչէր ձեռքովը :

« Յաճախ կը հարցնէր մեզ թէ չէի՞նք վախնար :

— Ո՛ւսկից , կը հարցնէի :

— Ամուսնէ՛ն , ամուսնէ՛ն , ամուսնէ՛ն , կը կրկնէր երիցս խաչակնքելով , մինչդեռ տարտամ բոց մը կը լուսաւորէր իւր խոշոր աչքերուն խոռոչը :

— Սակայն ամուսինը ես եմ :

« Կը ժպտէր , կարծելով թէ սուտ կը խօսէի , որովհետեւ անտարակոյս այնպէս կը զտնէր թէ աւելի սիրահարաց կը նմանէինք քան ամուսնացեալ անձանց : Մնաց

որ, անօգուտ էր որ գիտնար զմեզ միացնող կապը: Թող կուտայինք որ առաջ տաներ իւր իւր ենթադրութիւնները, մեծապէս զըւարձանալով իւր կրկնութիւններէն եւ չարամիտ ակնարկներէն:

«Նախ իր պարտէզը մտանք, յետոյ բընականանն՝ երբ յոգնած էինք մեր շրջագայութիւններէն:

«Ամեն անգամ կը վերսկսէր իւր հարցումը. Ձէ՞ք վախնար:

«Անգամ մ'ալ, գողղոջուն ձայնիւ մը աւելցուց:

— Կ'ուզէ՞ք որ սիրոյ պատմութիւն մը պատմեմ ձեզ:

«Եւ առանց մեր պատասխանին սպասելու, բաւական անկապակից պատմութիւն մ'ըրբաւ, ուր կուահեցինք սոսկալի տառա մը ոյր գիւցազնուհին ինք էր եւ որ իւր յիմարութեան պատճառ եղած էր:

«Մանկամարդ կին մը, գեղանի, յոյժ գեղանի, հեռաւոր երկրէ մը Ֆրանսա կը վերադառնար ընկերակցութեամբ իւր ամուսնոյն որ կը պաշտէր զնա: Նոյն նաւուն մէջ կը գտնուէր եւ հրապուրիչ ազնուական մը, որ նրբամիտ խօսքեր կը գրտնէր եւ ճարտարութեամբ կ'ուզէր զայնս մանկամարդ կնոջ, առանց ամուսնոյն կասկածն յարուցանելու: Երկու մարդիկը մըտերմացած էին լոկ ընկերակցական բարեկամութեամբ: Ար խօսակցէին, միասին կը ծխէին դունակին վրայ և շատ քիչ անգամ կը բաժնուէին իրարմէ:

«Կինը խենդ ուկ բնաւորութիւն մը եւ հրապաւ կրքեր ունէր: Ծովուն օդն արբըշտութիւն կուտար նմա: Ուղեւորութեան ձանձրոյթը երազոց մէջ կ'ընկղմէր զայն եւ կը ջլատէր: Պչրողական մեզկութեան մը մէջ կը մնար, անձանօթ հեշտութեանց եւ նոր զգայնութեանց ցանկացող միտքը պաշարուած այն բուռն սիրով զոր ծնուցած էր իւր ամուսնոյն բարեկամն սրտին մէջ:

«Իրիկուն մը, հասարակաց սրահին մէջ ճաշէլէ յետոյ, իւր ամուսինը կ'ամուրջին վրայ ելած էր. ինք խցիկն քաշուած էր՝ վայրէկ մը հանգչելու համար: Գուռը մեղմիւ հրուեցաւ եւ մարդն, որուն վրայ կը մտածէր, ներս մտաւ: Ծատ լաւ ընտրած

էր իւր ժամը: Թերեւս, ճաշի միջոցին կըւահած էր թէ նա կը գտնուէր այն վիճակին մէջ յորում կին մը կը դիմադրէ միմիայն երկարացնելու համար դիմադրութեան հեշտութիւնն եւ ամօթլեած երեւելու համար: Ճիշ չ'արձակեց: Անոր տարփուհին էր:

.....

«Առաւօտեան ժամ երկուքն էր: Ծովը կը մրմնար նաւերուն կողերուն դէմ, առանց կատաղութեան, մտաալուտ փոթորիկի մը սպառնալեօք:

— Կ'ամուրջին վրայ ելնենք, ըսաւ պաղութեամբ ամուսինն՝ անկողնին վրայ նետելով տարձանակ մը:

«Երկու մարդիկը խցիկին մէջ թողուցին սարսափահար կինն, եւ վեր մագլեցին՝ լուսաւորեալ լուսնին ճառագայթներէն որք պատուհաններէն ներս կը թափանցէին:

«Սակայն յանկարծ լուսնը քօղարկուեցաւ, եւ երկու մարդիկը ձեռք ձեռքի բընեցին՝ երթալու համար այն տեղ ուր պիտի մենամարտէին:

«Այժմ փայլակները կը հերձուին երկնից ամպերն եւ որոտմանց յարատեւ թաւալում մը կը խուսափէր իրենց գլխին վերեւէն: Ընդ միջաբար կը տեսնէին զիրար, սակայն հազիւ կրնային իրարու խօսք լսել, որովհետեւ ծովը սկսած էր մռնչել:

«Ատրձանակները լցուցած, որոշեցին միահաղոյն պարպել առաջին փայլակին:

«Հրապինուց ձայնը խափանուեցաւ կայծակի հարուածով մը:

«Պահակը լսեց մարմնոյ մը անկումը ջրին մէջ եւ գոչեց:

— Մարդ ինկաւ ծովը:

«Հինգ վայրկեան յետոյ, մանկամարդ կինը, սարսափէն անշարժ մնացած շուրթեան անկողնոյն մէջ, տեսաւ խցիկին դըրան բացուիլն եւ իւր տարփածունն ներս մտնելն:

«Իւր ամուսինը մեռած էր: Յայնժամ անկողնոյն վրայ ելաւ կանգնեցաւ, թքաւ այդ մարդուն երեսին զոր քիչ մ'առաջ փայտայած էր կրակոտ գգուանքներով, եւ պոռաց. Ա՛ստ, վճատ:

«Գրեթէ այս պատմութիւնն է զոր հանեցինք այն մենախօսութեան հատակոտոր-

ներէն զոր յիմարուհին ըրաւ մեզ կեր-
կերեալ ձայմիւ մը : Երբ ըննցուց , խնդաց
մահաբոյր ծիծաղով մը որ սարսուռ ազգեց
մեզ , յետոյ , այսահարի մը պէս , վերստին
կրկնեց մեզ իւր հարցումն :

— Ըսել է չէ՞ք վախնար :

« Ինքնիրենէն աւելցուց .

— Ո՛ւսկից : Բայց ամուսնէն , ամուս-
նէն :

« Եւ իւր աչերը խոշոր խոշոր կը բաց-
ուէին արհաւիրանօք : »

ԵՒԱՅԼՆ

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Թիւի 24.	(Մասն թիւ 3814)
» 33.	» » 3826)
» 34.	» » 3827)
» 35.	» » 3828)
» 36.	» » 3828)

ԽՆԴԻՐ ԹԻՒ 31

L O T O T O

Հարիւրորդամէթրն ընդունելով իբր մի-
ութիւն , կ'ունենանք հետեւեալ հաւասարու-
թիւնը .

$$\frac{5}{4} \pi \times 1000 \times 15,6 =$$

$$= \left(\frac{4}{5} \pi \times 1000 - \frac{4}{5} \pi (10 - t)^3 \right) \times 21,5$$

կամ
 $1000 \times 15,6 = ((1000 (10 - t)^3) \times 21,5$
որոց մէջ + կը ցուցնէ անծանօթ թանձրու-
թիւնը :

Սոյն վերջին հաւասարութենէն կը բա-
ղեմք .

$$10 - t = \sqrt[3]{\frac{7900}{\sqrt{21,5}}}$$

$$\text{եւ } t = 2,47, 8376 :$$

ԹԻՒ 32

L O T O T O

Տեղափոխեալ օդոյ ծանրութիւնը կու-
տայ մեզ հետեւեալ ձեւանն .

$$\frac{4}{5} \pi \times 1,5$$

իսկ ջրածինի ծանրութիւնը .

$$\frac{4}{5} \pi \times 1,5 \times 0,0695$$

+ կոչելով խէժի թանձրութիւնն հարիւ-
րորդամէթրով , ծանրութիւնը պիտի լինի .

$$\frac{4}{5} \pi ((10 + t)^3 - 10^3) \times 0,9$$

որով կ'ունենանք հետեւեալ հաւասարու-
թիւնը .

$$\frac{4}{5} \pi \times 1,5 (1 - 0,0695) -$$

$$- \frac{4}{5} \pi ((10 + t)^3 - 10^3) \times 0,9 = 2 :$$

ՊԱՏ. — $t = 0,47, 0027$ կամ 27 հազա-
րերորդ հազարերորդամէթր :

Սոյն կրկին խնդրոց համար եւս , լուծո-
ղաց անուանք կը պակսին մեզ :

ՔՂԻ. — Տք. Մամբրէ Աւետեան , Յովհաննէս Սա-
մուէլեան եւ Ոսկեան Իրբէսէլեան — Թիւ 29 Խընդ-
րոյ լուծումնիդ ուղիղ է :

ՇԱԲԱԹԱԿԱՆ

ՍՈՒՐ ՀԱՆԴԱԿ

4 Յուլիս 1886

Նոր Կրօնական Ժողովը կազմուեցաւ
ընդ ատենապետութեամբ Ամեն . Խրիմեան
Սրբազանի , հետեւեալ կերպով .

Տ. Հայեակ Եպիսկ . Դիմաքսեան , Դեր - Ա .
Կենտրոն

» Գէորգ Վրդ . Իւթիւճեան , Ա . Արեւարդ .

» Իգնատիոս » Շիշէճեան , Բ . »

» Գէորգ » Ուստճուքլեան

- Տ. Ներսէս Վրդ. Ասլանեան
- » Մաղաքիա » Տէրունեան
- » Յովսէփ » Սարաճեան
- » Խաչատուր Քհնյ. Գաբրիէլեան
- » Արիստակէս » Մամբրէեան
- » Գրիգոր » Ադամեան
- » Յովհաննէս » Շահպազեան
- » Յովհաննէս » Հիւնքեարպէյէնտեան
- » Միքայէլ » Պալատու

Ազգային ժողովն իւր նախաքննիչ դիւանաց ընտրութիւնն եւս կատարելէ յետոյ, շուրջ մէկ ամսուան համար դադրեցուց իւր նիստեր առաջարկութեամբ Ատեմապետ Մերեճմզուլի Յարութիւն էֆէնտի որ յայտնեց թէ Մայր-Գիււանը պէտք ունի օրակարգի վրայ գտնուած խնդիրներն ուսումնասիրելու : Կրօնական ժողովն իւր նախորդին նման երկուշաբթի օրերը պիտի գումարէ իւր նիստեր : Առաջին նիստը գրաւուեցաւ իւր դիւանին ընտրութեամբ եւ հաւանաբար յառաջիկայ երկուշաբթի գործի պիտի սկսի :

Վանէն նոր լուր մը չի կայ շաբթուս մէջ : Գեր. Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան, որ Ազգային Վարչութեան հրահանգին համաձայն Էջմիածնէն Վան ուղեւորած էր, անցեալ շաբթուս անդ հասնելով մեծ պատուովք ընդունուեր է եւ անտարակոյս այս պահուս ձեռնարկած լինի իւր ըննութիւնն ի մասին ընտրական վերջին գէսքերուն եւ Աղթամարայ գործոց :

Միւս նորաստեղծ Եպիսկոպոսունք եւս մեկնած են արդէն Մայր Աթոռէն իրենց վիճակները վերադառնալու համար : Գեր. Ստեփան Եպիսկոպոս մայրաքաղաքէս անցնելով ուղեւորեցաւ ի Նիկովիդիա ուր ազգայինը յոյժ փառաւոր ընդունելութիւն մը ըրին իրենց սիրեցեալ առաջնորդին : Տարակոյս չը կայ թէ Պայպիտի, Կարնոյ, Տըրապիղունի եւ Նիկովիդիոյ Ս. Առաջնորդք իրենց պաշտօնի գլուխը վերադառնալով, նոր զարկ մը պիտի տան տեղական ազգային գործոց յառաջիմութեան եւ եւս առաւել փայլին նորանոր գործովք որոցմով նշանաւոր տեղ մը գրաւած են արդէն հայ եկեղեցականութեան արժանաւոր դասուն մէջ :

Կեդրոնին մէջ շունինք լուր մը յիշատա-

կութեան արժանի : Քաղաքական ժողովը նիստ չէ ըրած մէկ քանի շաբաթէ հետէ . հաւանաբար Խառն ժողով գումարի այսօր :

Կրթական գեղեցիկ հանդէս մը կատարուեցաւ կիրակի օրը : Հայկական Կրթարանի տնօրէն Յ. Գուրգէն էֆէնտի այդ օրը կատարեց իւր վարժարանի հիմնարկութեան տասնամեակը : Բազում ականաւոր ազգայինք, երեսփոխանք, գրագէտք, խմբագիրք համախմբուեցան դաշտային սեղանի մը շուրջն ի Սարը-Յար, ուր 300ի չափ հըրաւիրեալք զնացած էին յատուկ շոգենաւով : Հանդէսն յոյժ զուարթ եղաւ . պարագային յարմար բանաստուութիւններ ըրին եւ բաժակներ առաջարկեցին Տեսաք Գարագաչեան, Մերեճմզուլի, Փափազեան և այլք եւ երեկոյին հրաւիրեալք իրենց տեղերը վերադարձան գոհ սրտով :

Մտերմական հանդէս մը կատարուեցաւ նաեւ շաբթուս սկիզբն ի Մեծ Կղզի, Նորատունիեանց տունն : Արեւելի եւ Մասիսի Վարչական Խորհրդոյ ատենապետ Սըվաճեան Կարապետ էֆէնտի նշանախօսութիւնն ընդ շնորհաշուք Օրիորդ Սոֆի Մաքսուտի կը համախմբէր խումբ մը բարեկամներ՝ անկեղծ բարեմաղթութեամբք եւ շնորհաւորութեամբք :

* * *

Արտաքին խնդրոց մէջ, յիշատակութեան արժանի է նոր խնդիր մը զոր յարոյց Ռուսիա, դադրեցնելով զՊաղում ազատ նաւահանգիստ լինելէ : Այս որոշման համեմատ, ամառս 4/16 էն սկսեալ, այդ քաղաք դադրած է ազատ նաւահանգստի մը առանձնաշնորհումները վայելելէ եւ այն թուականէ յետոյ ի Պաղում հասնող ամեն վաճառաց համար մաքս կը վճարուի նոյն համեմատութեամբ որով կը վճարուի ուստական ուրիշ նաւահանգիստներու մէջ :

Եւրոպական դահլիճք դրադած են այս խնդրով որ ոչ այնքան առեւտրական, որքան քաղաքական նշանակութիւն ունի : Յամաքային բոլոր մեծ Տէրութիւնք, ընդ որս եւ Թուրքիա, պատասխանեցին ուստական ծանուցագրոյն ի մասին Պաղումի, պարզապէս զեկուցանելով թէ ստացած են զայն :

Կապտուռի որ Անգլիա, իրրեւ գլխաւոր շահ ունեցող Տէրութիւնն այս խնդրոյն մէջ, ճշդէ իւր դիտաւորութիւններ, Կարծողներ ալ կան թէ Անգլիա, Թուրքիա եւ Իտալիա համախորհուրդ պիտի գործեն նրկատելով որ Ռուսիա յայտ յանդիման ստանալիս կ'ընէ Պէրսիոյ գաշնագրոյն մէջ կարեւոր տրամադրութիւնը: Կը յիշուի թէ 1878ի պատերազմէն յետոյ, Պաղուսը Թուրքիոյ կողմէ Ռուսիոյ թողուեցաւ: Այս թողման դէմ բողոք բարձած լինելով Անգլիա, Պէրսիոյ վեհաժողովն ազատ նաւահանգիստ հոչակեց զՊաղուս: Այդ թուականէն ի վեր, Ռուսիա իւր բոլոր ջանքերն ի գործ դրած է զինուորական նաւահանգիստ մը ընելու համար զՊաղուս: Ամբողջութիւններ շինուեցան քաղաքին շուրջը որ երկաթուղիով մը միացած է Կովկասի գծին: Ի մի բան, Աեւ ծովու առաջնակարգ նաւարաններէն մին եղած է այն: Հետեւաբար կարելի է ըմբռնել թէ որքան մտահոգութիւն կը պատճառէ Ռուսիոյ արդի որոշումն որ այնքան անակնկալ է որքան կարեւոր ամեն տեսակէտներով:

Բեղրսուրուրկի գահլիճն իւր այս խորհուրդն իրակահանգեալ համար, գուցէ յարմարագոյն առիթ սեպեց այն միջոցն յորում Անգլիա իւր ներքին խնդիրներով համակեալ է: Եւ արդարեւ, Լոնտոնի Խորհրդարանի լուծումէն յետոյ, որ տեղի ունեցաւ Պ. Կլատտոնի Իռլանտական Մրագրոյն մերժմամբ, բուռն յուզում կը տիրէ յԱնգլիա երեսփոխանական նոր ընտրութեանց առթիւ որք կը կատարուին այս պահուս: Մինչև ցարդ ծանօթ ընտրութեանց արդիւնքն հետեւեալ կերպիւ կը բաշխուի.

Պահպանողականը	307 բուէ
Միութենական-Ազատականը	73 »
Կատարողականը	170 »
Բառնէլեանը	81 »

Հետեւաբար Միութենականաց շահած բուէից գումարն է 380. Ինքնօրինականաց՝ 251: Մեծամասնութիւն ընդդէմ նախարարութեան՝ 129: Այլ եւս 39 ընտրութիւնք միայն կը մնան կատարելի: Այս վիճակին մէջ, Լոնտոնի վերջին հեռագիրք կը ծանուցանեն թէ Պ. Կլատտոն որոշած է գործէ քաշուիլ նախ քան զգումարումն Խորհրդարանին եւ թէ Սալզպէրի մարքիզը

պիտի կոչուի նոր նախարարութիւն մը կազմելու:

Պուլկարք կը շարունակեն իրենց վրայ խօսեցնել տալ, թէ եւ ոչ առաջուան նման սգեւորութեամբ: Սոփիայի Ազգ. Ժողովն Ազգայնական Ինքնակառուցութեան ի պատասխան պատրաստեալ Ազգերձը քուէարկելէն ի վեր, կը վիճաբանի օրինական ծրագրերով և հարցմանց ու հարցապնդմանց կոյտ մը գիշուած կայ իւր զիւանին վերայ: Մինչ երեսփոխանական կուսակցութիւնք զբողոք են անոնցմով, Պուլկար կառավարութիւնը Սոփիայի ուսուսական գործակալին դիմելով, հարցուցեր է թէ կարելիութիւն կայ Զարին եւ Ինքնակառուցութեան հաշտութիւն մը գոյացնելու: Կ'ըսուի թէ Զարին ներկայացուցիչը վհատեցուցիչ պատասխան տուեր է: Տ. Ա.

Յ. Գ.— Վերջին պահուն կ'իմանանք թէ Խառն Ժողովն այսօր ի Նիսոս գումարուելով Վանայ Պատրիարքական Փոխանորդարդեր է Գեք. Ռուսձուքլեան Գէորդ Մ. Վարդապետն եւ որոշեր է յանձնարել Կըտուց Անապատի վանահայր Յովհաննէս վարդապետին որ ցղալուստ Պատրիարքական նորընտիր Փոխանորդին, վարէ վիճակին գործերը եւ Ժողովոց նախագահութիւնն. ժողովն որոշեր է միանգամայն առ ոչինչ գրել վերջին անգամ կատարուած ընտրութիւններն:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Աւրախութեամբ կ'իմանանք թէ ուրիշ ազգերէ ալ շատեր մտաւոր կը յայտնեն անգամակցիլ Արեւելեան Տնտեսական Միութեան, եւ արդէն տաճիկ թէ յոյն բաւական թուով անձինք արձանագրուած են. նոյնպէս գաւառներէն հետզհետէ կ'արձանագրուին. այս վերջնոց գիւրուութիւն մը տալու համար Միութեան Տնօրէն Ժողովը մասնաւոր կարգադրութիւններ ըրած է որք թիչ օրէն պիտի հրատարակուին Մասիսի միջոցաւ. այս շարժում հրատարակուեցաւ կանոնագրութեան յունարէն թարգմանութիւնը: